ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 22 մարտի 2021թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ա. Վաղարշյանի

Է. Շաթիրյանի

Քննության առնելով «ՏԵԽՆՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «ՏԵԽՆՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թ. փետրվարի 19-ին և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելուց հետո վերստին ներկայացվել է 2021 թ. մարտի 5-ին)՝ խնդրելով.

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր, այնքանով, որքանով այդ նորմում կանխատեսելի չափանիշների բացակայությունը հանգեցնում է դատական բացարձակ հայեցողական լիազորության, որն էլ իր հերթին հանգեցնում է ոչ պատճառաբանված որոշումների կայացմանը»:

Հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի դատական կազմի նախագահի միջնորդությունը՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու նպատակով սույն դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թ. մարտի 25-ը ներառյալ:

2. Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 54-րդ հոդվածի 2-րդ մասը չի պարունակում կանխատեսելի չափանիշներ, որոնցով դատարանը պետք է առաջնորդվի դատավարության մասնակցի ներկայացրած՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը քննելիս, ինչը դատարանին տալիս է «բացարձակ» հայեցողական լիազորություն և հանգեցնում իրավական նորմի որոշակիության սկզբունքի խախտմանը:

Դիմողի կարծիքով նման պայմաններում դատարանները գործերի մի մասով նույն պատճառաբանություններով բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունները բավարարում են, այլ գործերով՝ մերժում:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ գործով վերջնական դատական ակտը՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է 2020 թվականի հուլիսի 29-ին: «Նորմատիվ իրավական ակտերի

մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի վերաբերյալ գործով վերջնական դատական ակտը կայացվել է 2020 թվականի հուլիսի 29-ին, Սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքն սկսում է հոսել 2020 թվականի հուլիսի 30-ից: Ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումից, որի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը, Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը տվյալ դեպքում ավարտվել է 2021 թվականի փետրվարի 1-ին: Մինչդեռ, «ՏԵԽՆՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի դիմումը փոստային բաժանմունքին է հանձնվել 2021 թվականի փետրվարի 16-ին: Հետևաբար՝ դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ինչը հիմք է անհատական դիմումով գործի քննությունը մերժելու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ՏԵԽՆՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ա. Թունյան

Անդամներ՝ Ա. Վաղարշյան

Է. Շաթիրյան

22 մարտի 2021 թվականի
ՍԴԴԿՈ-18